# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 953-Ա

## ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ, ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ավագանու 18.09.2025 թվականի N 59-Ա որոշումը և համայնքի ղեկավարի 24.11. 2025 թվականի N 163 կարգադրությունը.

### Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Համաձայն մրցութային հանձնաժողովի N 02 արձանագրության՝ Ճամբարակ համայնքի Դրախտիկ բնակավայրի 05-032-0210-0066 կադաստրային ծածկագրով 0.53961 հա վարելահողի, արոտավայրի վարձակալական մրցույթի հաղթող ճանաչել Գառնիկ Ջահանգիրյանին և կնքել վարձակալության պայմանագիր 25 տարի ժամանակով՝ 2025 թվականից 2050 թվականը: Հողամասի տարեկան վարձավճարի չափը կազմում է 17.750 ՀՀ դրամ:
   Պայմանագրի կնքման պահին վարելահողի կադաստրային արժեքը կազմում է՝ 152.336 ՀՀ դրամ:
   0.2399 հա վարելահողի տարեկան վարձավճարի չափը կազմում է 10.000 ՀՀ դրամ, որը կազմում է վարելահողի տարեկան հողի հարկի 1094%-ը: Վարելահողի տարեկան հողի հարկը կազմում է 914 ՀՀ դրամ:
   Պայմանագրի կնքման պահին արոտավայրի կադաստրային արժեքը կազմում է՝ 96.657 ՀՀ դրամ:
   0,29971 հա արոտավայրի տարեկան վարձավճարի չափը կազմում է 7.750 ՀՀ դրամ, որը կազմում է արոտավայրի տարեկան հողի հարկի 1336%-ը: Արոտավայրի տարեկան հողի հարկը կազմում է 580 ՀՀ դրամ:
   Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով, ըստ տարվա օրացուցային եռամսյակների, ոչ ուշ, քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 30-ը:
   Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանմագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 10 օրվա ընթացքում:
   Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:
   Երրորդ անձին ենթավարձակալության տրամադրումը չի թույլատրվում առանց վարձակալի լրացուցիչ համաձայնության:
   Հողի կադաստրային արժեքի աճի դեպքում վարձավճարի չափը ավելանում է:

2. Նշված գումարը վճարել Ճամբարակ համայնքի բյուջե՝ 900185066025 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 01
ք. Ճամբարակ